

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՎԵՂՈՒԸՑ Ի ԿՈՆՏԱԿՏ ՎԵՋԱՓԸՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Հայրապետական հրամանք.

Կոնդակ Յանուն Սինոդի որով պատուիրեցաւ տալ նորոգել զորմունս արտաքին հին սենեկաց միաբանութեան. թ. 925:

— Յանուն վիճ. Կոնսիստորիային վրաստանի որով յայանեցաւ թէ չէ մարթ հեռացուցանել զքահանայ որ ի տեղւոջէ յայտեղի. թ. 926:

— Յանուն վիճ. Կոնսիստորիային Շամախայ որով պատուիրեցաւ տալ միանուագ Տ. Մեսրոբ վարդապետի 200 ա. և Տ. Տաճատ քահանայի 200 ա. իսարին՝ ի հազար հինգ հարիւր լուրեկաց եկելոց յեկեղեցեաց Բագուայ. թ. 956:

— Յանուն Հոգ. Կառավարութեան Նուխայ որով վաւերական համարեցաւ պսակն Նուխեցի Յովհաննիսի Զոչարեանց ընդ Զանազանայ Զաքարեանց. թ. 989:

— Յանուն Նկեղ. խորհրդոյ Ս. Պետերբուրգի յաղագս բարերարելոյ յայսմ ամի ևս ուսանող իզնատիոսի իփէքչեան. թ. 1000:

— Յանուն Տ. Բենիկ վարդապետի որով հաստատեցաւ ի Տեսուչ թեմակ. դպրանոցին Նրեանայ. թ. 1006:

— Յանուն Հոգարարձութեան թեմակ. Հոգ. դպրանոցին Նրեանայ որով ծանուցաւ հաստատութիւն Բենիկ վարդապետի ի տեսուչ դպրանոցին. թ. 1007:

Հայրապետական պարգևք.

Կոնդակ յանուն իսահակ վարդապետի Տ. Միքայէլեան, որով շնորհեցաւ նմա սեփական փիլոն. թ. 932:

Արժանացողք Հայրապետական Օրհնութեանց և Դովութեանց.

Կոնդակ օրհնութեան և զոհունակութեան յանուն Վիչկնայ Գասպարեան վասն նուիրարերութեան նորա մի պատուական ջերմաւորի. թ. 1001:

— Օրհնութեան և զոհունակութեան յանուն պ. Աղաւելի Յովսէփեան Ռաշտեցոյ յաղագս շինելոյ նորա իւրով ծախիւք օր. զպրոցի Ռաշտ քաղաքի. թ. 1003:

Յաւակցութիւն.

Կոնդակ ցաւակցական յանուն Ամեն. պատրիարքին Կ. Պօլսոյ յաղագս մահուն Դրիգորիս եպիսկոպոսի Ալէքսանդրեան և Սարգիս արքեպիսկոպոսի Տ. Գասպարեան. թ. 1005:

ՎԵՂՈՒԸՑ ՄԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Յունիս 4. — Նրեանի Կոնսիստորիային պատուիրուում է կարգադրել նորոգելու Ալահի գիւղի եկեղեցին, որի համար պէտք է ծախսուի նուէր ստացուած 500 ուրլի և եկեղեցապատական 500 ա.:

Յուն. 4. — Նրեանի Կոնսիստորիայի ցուցմամբ Սինոդը որոշեց Ալէքսանդրապոլի Մկրտիչ քահանային ուղարկել նոյն թեմի վանքերից մէկն առժամանակեայ բնակութեան համար՝ մինչև կապաշխարէ իւր գործած զեղծումները. իսկ նորա ծուխը յանձնել մի ուրիշ քահանայի քահանայական արգիւնքների կէսը հասցնելով նրան վանահօր ձեռքով:

Յուն. 9.— Հանգուցեալ Մնացական Տէր Դաւթեան Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Դ. Ժեմարանի օգտին 2000 ռուբլի կտակած լինելով Սինօզը պատուիրեց Վրաստանի և Իմէրէթի Հայոց Կոնսիստորիային նրա ժառանգ երգուեալ հաւատարմատար Պետրոս Եարութիւնեան Բալանթարեանցից ստանալ նոյն գումարը և ներկայացնել Սինօզին:

Յուն. 11.— Մահմետական Մովսափ Արզումաշ օղլի փափագ յայտնած լինելով մտնելու Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ ծոցը՝ Սինօզը խնդրեց պ. Կառավարչապետի անօրինութիւնը:

Յուն. 14.— Նոյնպիսի խնդիր առաջարկուեցաւ քիւրդ Մատո Սամար օղլու համար:


Յուն. 21.— Սինօզը պատուիրեց Ղարաբաղի Հայոց Կոնսիստորիային Հանգ. Եղիսարէթ Կրասիլնիկեանի կտակատարից ստանալ յօդուած Ս. Էջմիածնի կտակուած հազար ռուբլին. մնացեալ կտակած դրամը յանձնել Եռշու Միլլիբեցուց եկեղեցու երեսփոխանին և Եռշու Կուսանաց Մենաստանի մայրապետին. իսկ 24,000 ռուբլու տոկոսի կէսը ստանալ և պահել Կոնսիստորիայի գանձարանում: մինչև Ղարաբաղի Թեմի համար նոր առաջնորդ կարգուելը:

Յուն. 7.— Սինօզը խնդրեց Կովկասի պ. Կառավարչապետի Թոյլտուութիւնը գնելու Եարութիւն Փարաջանեանցից 10,500 ռուբլի արժողութեամբ մի գետին՝ Ներսիսեան Հայոց հոգեւոր դպրանոցի համար կրպակներ շինելու նպատակով:

Յուն. 9.— Պր. Կառավարչապետի 27 յունիս Թիւ 6920 Թոյլտուութեան համեմատ հրամայուեցաւ Վրաստանի և Իմէրէթի Հայոց Կոնսիստորիային մկրտութեամբ ընդունել Բիրդ Եղիզ Օսման Ուղօ օղլուն Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ ծոցը:

Յուն. 9.— Աստրախանի Թեմի առաջնորդ Գեր. Արիստակէս Արքեպիսկոպոսի յայտարարութեան համեմատ Սինօզը գրեց օտար դաւանութեանց հոգեւոր գործոց Դեպարտամէնտին և խնդրեց որ Թոյլտուութիւն տրուի Գիւլումիանց Տ. Մեսրոպ քահանային իւրա-

քանչիւր տարուայ ամառնային երեք ամիսը զնալ հոգեւելու Սիրիւրիայի Լուսաւորչական հայերին:



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԵԺԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵՆՈՐՀՐ.

«Զի ոյր գոցի՝ տայի նմա եւ յաւելցի,
եւ ոյր ոչն գոցի՝ եւ զոր ունիցին քարճի
ի նմանիս:»

Մատթ. ԺԳ. 12:

ԽՆՍ, ըստ երեւութին անարգար վճիռ՝ մանաւանդ մեր ժամանակակից սերունդի տեսակէտով, որ այնչափ ճառում է մարդոց հաւասարութեան մասին, յառաջ է վարում ազգատ բանուորի իրաւունքը հարուստ գործատիրոջ դէմ: Աշխարհի համար նոր բան չէ, որ զօրեղն ու ընդունակը յառաջ է գնում, իսկ Թոյլն ու ապաշնորհը աւելի ու աւելի ետ մնում: Բայց մեծ անտեղութիւն կլինէր ի հարկէ մտածելը, թէ աւետարանը նուիրագործում է զօրեղի իրաւունքը Թոյլի դէմ: Թիւրիմացութիւնը նորանից է, որ աւետարանը տարբեր կերպով է ըմբռնում զօրութիւն և մեծութիւն: Քան սովորական աշխարհը՝ ծառայողին հեռու է այն մտքից, թէ մութ ճանապարհներով հարստութիւն դիզած պարսպ մեծատունը իրաւունք պէտք է ունենայ իւր զրամագլխի զօրութեամբ աշխատաւորի գանձքտինքով վաստակած կոպէկները նորա ձեռքից խլելու և գումար գումարի վերայ դիզելու: Բայց պահանջում է, որ բարոյապէս և հոգեպէս հարուստը իւր ներքին ընդունակութիւնները գործադրելու համար ընդարձակ միջոցներ ունենայ, օգտուէ նաեւ այն միջոցներով, որոնք անգործ ընկած են բարոյապէս անանկի և հոգեպէս ծոյլի մօտ: